Հաստատված է Խաչատուր Աբովյանի անվան
հայկական պետական մանկավարժական
համալսարանի գիտական խորհրդի
2012 թվականի սեպտեմբերի 20-ի նիստում
Ռեկտոր Ռուբեն Միրզախանյան

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգը (այսուհետ՝ կարգ) մշակվել է համաձայն «Կրթության մասին,, և «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին,, ՀՀ օրենքների, ,,Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին,, ՀՀ օրենքի (2005թ)հոդված 26-ի 5-րդ կետի և ՀՀ Կառավարության 2005թ դեկտեմբերի 27-ի թիվ 2307-Ն «ՀՀ Բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին որոշման, ՀՀ ՌԱԶ-ի պահանջների հիման վրա և հիմնված է ՀՀ, ԱՊՀ այլ երկրների բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդունված և կիրառվող կանոնակարգերի և կարգերի վրա:

1.2. Ըստ մասնագիտության ուղղվածության ԲՄԿ իրականացման մասնագիտական կրթական ծրագիրը /ՄԿԾ/ բխում է տվյալ մասնագիտության բարձրագույն մասնագիտական կրթության չափորոշիչից:

1.3. Բարձրագույն մասնագիտական կրթության ուսումնական պլանը հանդիսանում է. ԲՄԿ ՄԿԾ-ի բազային ուսումնամեթոդական փաստաթուղթ, որտեղ հստակ ամրագրված են կոնկրետ մասնագիտության շրջանակում բակալավրի և մագիստրոսի պատրաստմանն ուղղված գործընթացի տրամաբանական ընթացքը՝ ըստ կրթաբլոկների առարկայացանկի/մոդուլների՝ ըստ ուսումնական տարիների և կիսամյակների ժամաքանակի, ամփոփիչ ատեստավորման ձևերի համաձայն մասնագիտության չափորոշիչի:

1.4.Մասնագիտական ուսումնական պլանների կարևորագույն առանձնահատկությունը կայանում է նրանցում՝

- ուսումնական պլանի առարկայացանկի մշակման ընթացքում մասնագիտական կոմպետենցիաների,կրթական ելքային արդյունքների կարևորումն ու դրան համապատասխան վերջնարդյունքների վրա հենված առարկայացանկի մշակումը,

- ակադեմիական ժամերի և կրեդիտների տրամադրման նոր մոտեցումների մշակումը, ելնելով յուրաքանչյուր առարկայի տեղից և դերից համապատասխան ուղղությամբ մասնագետի պատրաստման գործում:

1.5.ՀՊՄՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանների մշակման նպատակներն են՝

- Անցում ուսումնական գործընթացի ոչ գծային կառուցվածքի և կազմակերպման ճկուն մեթոդների,
- Կրթական գործընթացի և կազմակերպչական-վարչական աշխատանքների որակի բարձրացում,
- Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրման անցումային գործընթացի ապահովում,
- Բարձրագույն մասնագիտական կրթության եվրոպական չափանիշների ներմուծման շնորհիվ ՀՊՄՀ-ի մասնագիտական կրթության մրցունակության,փոխճանաչման,չափման բարձրացում, համաեվրոպական կրթական տարածքում, ինչպես նաև ԱՊՀ-ում,
- Ուսանողական շարժունության ապահովում, ինչպես հանրապետության, այնպես էլ արտասահմանյան բուհերում,
- Ուսումնական պլանով նախատեսված պարտադիր ժամաքանակից դուրս ուսանողների անհատական, ստեղծագործական, հետազոտական աշխատանքի խթանում և հնարավոր գործունեության զարգացում,
- Ուսանողի համակարգված ինքնուրույն աշխատանքի ակտիվացում, ուսանողակենտրոն ուսուցման ապահովում՝ուսանող-դասախոս հարաբերության արդյունավետության բարձրացում,

2. ԲՄԿ չափորոշիչային պահանջները ուսումնական պլանին

2.1. Մասնագիտական կրթական ծրագրի իրացման ուսումնական պլանի անհրաժեշտ նորմատիվ պահանջներն են / առկա ուսուցման համար ներառյալ նաև հետ ավարտական արձակուրդը/

- Բակալավրի ՄԿԾ – 4 տարի (208 շաբաթ), 240 կրեդիտ;
- Մագիստրոսի ՄԿԾ – 2 տարի (104 շաբաթ), 120 կրեդիտ:

ԲՄԿ ՄԿԾ-ի մեկ ուսումնական տարվա աշխատածավալը առկա համակարգում կազմում է 40 շաբաթ որն էլ համապատասխան է 60 կրեդիտի:

2.2. Արձակուրդներին տրամադրվող ժամանակը՝ առնվազն 12 շաբաթ, որից ձմեռային արձակուրդներ ոչ պակաս քան 2 շաբաթ:

2.3. Ուսումնական պլանը նախատեսում է.

- առարկաների ուսումնասիրման հաջորդականությունը՝ հիմնված նրանց տրամաբանական կապի վրա/ պարտադիր հաջորդականություն պահանջող, պարտադիր, բայց ոչ հաջորդական, ընտրովի/,
- առարկաների ռացիոնալ բաշխումը կիսամյակներում՝ ուսանողի հավասարաչափ ծանրաբեռնվածությունը ապահովելու նպատակով/ կիսամյակում 9 առարկայից ոչ ավելի, որոնցից 6 պարտադիր 3-ը կամընտրական/,
- Համալսարանի կադրային ներուժի,ուսումնական ռեսուրսների և նյութատեխնիկական բազայի արդյունավետ օգտագործումը /ՊԴՄ գիտական ցենզ և մասնագիտական պոտենցիալ, անհրաժեշտ հասանելի գրականության, կաբինետներ,լաբորատորիաներ/:

2.4. Ուսումնական պլանը որոշում է տվյալ մասնագիտության կամ ուղղության ուսումնական գործընթացի կառուցվածքը՝ ուսումնական առարկաների ցանկը և ծավալները,կրեդիտների քանակը, նրանց դասավանդման հաջորդականությունը, պրակտիկաների տեսակները և տևողությունը, պարապմունքների անցկացման ձևերը, գնահատման ձևերը և այլն:

2.5. Հաշվի առնելով ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանվող բարձրագույն կրթության ստանդարտական համակարգը և կրեդիտային հենքով ուսումնառության կազմակերպումը՝ ՀՊՄՀ-ում կիրառվում են պլանների հետևյալ տեսակները.

- Բազային/տիպային ուսումնական պլան (կրեդիտային հենքով),
- Աշխատանքային/տարեկան ուսումնական պլան (կրեդիտային հենքով),
- Ուսանողի ուսումնառության անհատական պլան ուսումնառության ամբողջ փուլի համար/ընթացիկ ուսումնական տարվա համար:

2.5.1 Բազային/տիպային ուսումնական պլանը յուրաքանչյուր ԲԿԾ ուսումնական գործընթացի կառուցվածքը որոշող հիմնական փաստաթուղթ է: Բազային/տիպային ուսումնական պլանում ներկայացվում են ուսումնական գործընթացի կազմակերպման բոլոր բաղադրիչները (դասընթացները/մոդուլները, պրակտիկաները, կուրսային, ավարտական աշխատանքները, քննությունները, ատեստավորումները)՝ յուրաքանչյուր բաղադրիչի համար ժամաքանակով և կրեդիտներով արտահայտված ուսանողների լսարանային և արտասարանային բեռնվածությամբ:

Բազային/տիպային ուսումնական պլանները մշակվում են մասնագիտական ամբիոնների կողմից՝ համաձայնեցվում ֆակուլտետի խորհրդի հետ և հաստատվում համալսարանի գիտական խորհրդում,հրամանագրվում ռեկտորի (պրոռեկտորի) կողմից:

2.5.2. Բազային/տիպային պլանների հաստատված պատճենները պահպանվում են համալսարանի ուսումնամեթոդական վարչությունում, ֆակուլտետում:

- Բազային/տիպային ուսումնական պլանը պետք է ունենա
  1. ուսումնական գործընթացի ժամանակացույց,
  2. ամփոփիչ տվյալներ ժամանակի բյուջեով (շաբաթներով)
  3. ուսումնական գործընթացի կառուցվածք ըստ դասընթացների և ժամաքանակի ըստ դասընթացների կրեդիտների և կիսամյակների
- Ուսումնական գործընթացի ժամանակացույցն իրենց ներկայացնում է տեսական ուսումնառության, քննաշրջանի, ուսումնական, մանկավարժական պրակտիկաների, ամփոփիչ պետական ատեստավորման, ինչպես նաև արձակուրդների օրացուցային տեղաբաշխում: Ժամանակի բյուջեի ամփոփիչ տվյալները արտացոլում են ուսումնական գործընթացի տեղաբաշխումը շաբաթներով:
- Ուսումնական գործընթացի պլանի կառուցվածքն արտացոլում է ուսումնական բաղադրիչների տեղաբաշխումը տարիներով, կիսամյակներով և մոդուլներով, ինչպես նաև լսարանային և արտալսարանային պարապմունքներով՝ ակադեմիական ժամերով և կրեդիտներով:
- Բազային/տիպային ուսումնական պլանը կազմվում է՝ առկա ուսուցման համար բակալավրիատի համար- 4 տարի տևողությամբ, մագիստրատուրայի համար- 2 տարի տևողությամբ, հեռակա ուսուցման համար՝- 4,5-5 տարի տևողությամբ, մագիստրատուրայի համար- 2,5 տարի տևողությամբ:
- Աշխատանքային/տարեկան ուսումնական պլանը կազմվում է ՀՊՄՀ ուսումնական վարչության / ֆակուլտետի կողմից՝ բազային ուսումնական պլանի հիման վրա և ծառայում է տվյալ ուսումնական տարվա ուսումնական գործընթացի ձևավորման և դասախոսների աշխատանքային բեռնվածքի հաշվարկման համար:

2.5.3 Աշխատանքային/տարեկան ուսումնական պլանում արտացոլվում են ուսանողի՝ կրթական ծրագրի յուրացմանն ուղղված գործունեության բոլոր տեսակները, դրանց համար հատկացված կրեդիտները, առարկաների տեսակները՝ ըստ բազային ուսումնական պլանի, լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանքի համար նախատեսած ժամաքանակը,առարկան դասավանդող դասախոսները,արված հնարավոր կիսամյակային փոփոխությունները տվյալ ուսումնական տարվա համար :

2.5.4.Ուսանողի ուսումնառության անհատական ուսումնական պլանը կազմվում է անհատական ուսուցման հնարավորություն ստացած ուսանողի կողմից տվյալ մասնագիտության բազային ուսումնական պլանի հիման վրա և արտացոլում է նրա ուսումնական գործընթացը նշված կիսամյակում/ուսումնական տարում:

2.5.5. Ուսանողի ուսումնառության անհատական ընթացիկ ուսումնական պլանը կազմվում է բազային ուսումնական պլանի հիման վրա անհատական մոտեցմամբ կրթության ամբողջ շրջափուլի համար, հետագայում կոնկրետացվում յուրաքանչյուր տարվա/կիսամյակի կտրվածքով և պարունակում է ուսանողի տվյալ ժամանակահատվածի կրթական գործունեության բոլոր բաղադրիչները (դասավանդվող առարկաներ, կուրսային աշխատանքներ, պրակտիկաներ և այլն):

3. Ուսումնական պլանների կառուցվածքը

3.1. Բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի բազային ուսումնական պլանները բաղկացած են հետևյալ բաժիններից.

I. ԲԿՄ անվանում/ դասիչ, այլ տեղեկություններ

II. Ուսումնական գործընթացի ժամանակացույց (տեսական ուսուցում, քննաշրջան, պրակտիկաներ, պետական որակավորում, արձակուրդներ և այլն)

III.Ուսուցման տևողությունը շաբաթներով

IV.Ուսումնական գործընթացի պլան

V.Ավարտական որակավորման աշխատանք

VI. Ավարտական որակավորման քննություններ:

3.2. ԲԿՄ անվանման/ դասիչի հետ միասին նշվում են շրջանավարտի որակավորումը, ուսուցման ձևը (առկա, հեռակա) և ուսումնառության տևողությունը:

3.3. Ուսումնական գործընթացի ժամանակացույց/աղյուսակում տարբերանշաններով նշվում են տեսական ուսուցման, պրակտիկաների, քննաշրջանների, ավարտական որակավորման և արձակուրդների օրացուցային շաբաթները:

Կիսամյակում ուսումնական շաբաթների թիվը, որպես կանոն, կազմում է 20 շաբաթ՝ որոնցից 16-ը /ներառյալ նաև պրակտիկաները/ տեսակագործնական ուսուցում 4-ը միջանկյալ և ամփոփիչ քննություններ: Բակալավրի կրթական աստիճանում ուսանողի շաբաթական լսարանային բեռնվածքը չի կարող գերազանցել 24-30 ժամը, իսկ մագիստրատուրայում՝ 12-22 ժամը:

Ուսումնական գործընթացի ժամանակացույցում տարվա շաբաթների թիվը հավասար է 52-ի, արձակուրդներին տրամադրվող ժամանակը՝ առնվազն 12 շաբաթ, որից ձմեռային արձակուրդներ ոչ պակաս քան 2 շաբաթ:

Բակալավրի կրթական աստիճանում բոլոր կուրսերի ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից:

Մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսումնական տարվա սկիզբը որոշվում է համաձայն տվյալ ուսումնական տարվա համար մագիստրատուրայի ընդունելության ժամանակավոր կարգի:

2-րդ կուրսի ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից:

3.4. Ուսուցման տևողությունը ներկայացնելիս անհրաժեշտ է հաշվարկել ուսումնական ժամանակը շաբաթներով՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա համար, հաշվի առնելով տեսական դասընթացները, պրակտիկաները, քննաշրջանները, ավարտական որակավորման աշխատանքները, վերջնական ատեստավորումը և արձակուրդները:

3.5. Ուսումնական գործընթացի պլանը ներառում է բոլոր դասավանդվող առարկաները՝ բաժանված ըստ կրթաբլոկների (ներառյալ ընտրովի առարկաները), դրանց հատկացվող ընդհանուր ժամաքանակը (լսարանային և արտալսարանային), գիտելիքների ստուգման ձևերը/ աշխատանքային ուսումնական պլան/, առարկային հատկացվող կրեդիտները, դասավանդման կիսամյակը, շաբաթական ժամաքանակը:

Ֆիզդաստիարակությանը,արտակարգ իրավիճակներին կրեդիտներ չեն հատկացվում,իսկ տրամադրվող ժամերը չեն մտնում շաբաթական ժամաքանակի հաշվարկի մեջ:

3.6. ԲՄԿ ՄԿԾ-ի ուսումնական պլանի կառուցվածքում նախատեսվում են կրթաբլոկներ և բաժիններ:

Բակալավրի ՄԿԾ-ի համար պարտադիր են համարվում դասընթացների հետևյալ կրթաբլոկները.

- ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացներ (ԸՀՍՏ),
- ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական դասընթացներ (ԸՄԲ),
- ընդհանուր մասնագիտական դասընթացներ (ԸՄ),
- հատուկ մասնագիտացման դասընթացներ (ՀՄ)
- այլ կրթաբլոկ/ եթե մանկավարժահոգեբանական դասընթացները առանձնացվում են/

և 3 բաժիններ

- ուսումնական և մանկավարժական պրակտիկաներ
- ամփոփիչ ավարտական որակավորում

Մագիստրատուրայի ՄԿՕ-ի ուսումնական պլանի համարար պարտադիր են համարվում հետևյալ կրթաբլոկները.

- Ընդհանուր գիտակրթական դասընթացներ:
- Ընդհանուր մասնագիտական դասընթացներ (ԸՄԱ):

ա/ գիտատեսական

բ/ գիտամեթոդական

և 3 բաժիններ

- գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկա (ԳՄ/ՀՊ)
- գիտահետազոտական աշխատանք (ԳՀ)
- ավարտական որակավորման աշխատանք

Յուրաքանչյուր կրթաբլոկ և բաժին առանձին և ընդհանրական պետք է նախագծի և ապահովի ապագա մասնագետի մասնագիտությանն անհրաժեշտ կոմպետենցիաների դաշտ, կրթական ելքային արդյունքները:

3.7.Բակալավրի կրթական ատստիճանում մեկ կիսամյակի ժամաքանակը կազմում է 900 ժամ, մեկ ուսումնական տարին 1800 ժամ, ուսումնառության ողջ ժամանակահատվածը 7200 ժամ: Համարժեքորեն մեկ կիսամյակի կրեդիտների թիվն է 30 , մեկ ուսումնական տարվանը- 60 , ուսումնառության ողջ ժամանակահատվածինը – 240:

3.8. Բակալավրի կրթական ատստիճանում «Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական Դասընթացներ» (ԸՀՍՏ) կրթաբլոկի ընդհանուր աշխատատարությունը կազմում է մասնագետի պատրաստման անհրաժեշտ ընդհանուր ժամաքանակի 12-15%-ը,այն է 850-1080/լսարանային 720 և արտալսարանային 360/ ժամ, հատկացվող կրեդիտային միավորները 28-36: «Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթաց ներ « (ԸՀՍՏ) կրթաբլոկին հատկացված ժամաքանակի 20-30% պետք է հատկացվի կամընտրական առարկաներին, ելնելով մասնագիտական առանձնահատկու թյուններից և դրանց ներկայացվող պահանջներից:

ԸՀՍՏ կրթաբլոկի պարտադիր դասընթացներից են *հայոց լեզուն և գրականությունը, հայ ժողովրդի պատմությունը, փիլիսոփայությունը, օտար լեզուն, ֆիզիկական դաստիարակությունը, արտակարգ իրավիճակները*: Եթե այդ դասընթացներից որևէ մեկը մաս է կազմում ընդհանուր մասնագիտական դասընթացների (ԸՄ), ապա դրան հատկացված կրեդիտային միավորները (ժամաքանակը) կարելի է վերաբաշխել կրթաբլոկի այլ առարկաների վրա:

3.9. Սույն կրթաբլոկի կամընտրական դասընթացները որոշում են յուրաքանչյուր մասնագիտության համար ֆակուլտետների հետ համաձայնեցված՝ համապատասխան ամբիոն/ներ/ի առաջարկությամբ:

3.10. Բակալավրի կրթական աստիճանում «Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական առարկաներն (ԸՄԲ) կրթաբլոկի ընդհանուր աշխատատարությունը կազմում է, մասնագետի պատրաստման անհրաժեշտ ընդհանուր ժամաքանակի 3-5%-ը, այն է 220-360/ուսարանային 120 և արտալսարանային 60/ ժամ, հատկացվող կրեդիտային միավորները 8-12: « Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական առարկաներ Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական առարկաներ «(ԸՄԲ) կրթաբլոկին հատկացված ժամաքանակի 10-20% պետք է հատկացվի կամընտրական առարկաներին, ելնելով մասնագիտական առանձնահատկություններից և դրանց ներկայացվող պահանջներից:

ԸՄԲ կրթաբլոկի պարտադիր դասընթացներից են *ինֆորմատիկան /մաթեմատիկան, բնապահպանությունը:* Եթե այդ դասընթացներից որևէ մեկը մաս է կազմում ընդհանուր մասնագիտական դասընթացների (ԸՄ), ապա դրան հատկացված կրեդիտային միավորները (ժամաքանակը) կարելի է էվերաբաշխել կրթաբլոկի այլ առարկաների վրա:

Սույն կրթաբլոկի կամընտրական դասընթացները որոշում են յուրաքանչյուր մասնագիտության համար ֆակուլտետների հետ համաձայնեցված՝ համապատասխան ամբիոն/ներ/ի առաջարկությամբ:

3.11. Բակալավրի կրթական աստիճանում «Ընդհանուր մասնագիտական դասընթացներ» (ԸՄ) կրթաբլոկի ընդհանուր աշխատատարությունը կազմում է մասնագետի պատրաստման անհրաժեշտ ընդհանուր ժամաքանակի 25-30%-ը, այն է 1800-2160/ուսարանային 1440 և արտալսարանային 720/ ժամ, հատկացվող կրեդիտային միավորները 60-72: «Ընդհանուր մասնագիտական դասընթացներ կրթաբլոկին հատկացված ժամաքանակի 20-30% պետք է հատկացվի կամընտրական առարկաներին, ելնելով մասնագետին ներկայացվող որակավորման պահանջներից:

ԸՄ կրթաբլոկի պարտադիր և կամընտրական դասընթացները որոշում են յուրաքանչյուր մասնագիտության համար ֆակուլտետների հետ համաձայնեցված՝ համապատասխան մասնագիտական ամբիոն/ներ/ի առաջարկությամբ:

Սույն կրթաբլոկում կամընտրական դասընթացների առկայությունը պարտադիր է:

3.12. Բակալավրի կրթական աստիճանում «Հատուկ Մասնագիտական դասընթացներ» (ՀՄ) կրթաբլոկի ընդհանուր աշխատատարությունը կազմում է մասնագետի պատրաստման անհրաժեշտ ընդհանուր ժամաքանակի 35-40%-ը, այն է 2520-2880 /ուսարանային 1920 և արտալսարանային 960/ ժամ, հատկացվող կրեդիտային միավորները 84-96: Ընդհանուր

մասնագիտական դասընթացներ կրթաբլոկին հատկացված ժամաքանակի 30-35% պետք է հատկացվի կամընտրական առարկաներին, ելնելով մասնագետին ներկայացվող որակավորման պահանջներից:

ՀՄ կրթաբլոկի պարտադիր և կամընտրական դասընթացները որոշում են յուրաքանչյուր մասնագիտության համար ֆակուլտետների հետ համաձայնեցված՝ համապատասխան թողարկող ամբիոն/ներ/ի առաջարկությամբ:

Մույն կրթաբլոկում կամընտրական դասընթացների առկայությունը պարտադիր է:

3.13. Մագիստրոսի պատրաստման ծրագիրը բաղկացած է 2 հիմնական կառուցամասից՝ ուսումնական և հետազոտական, որոնցից յուրաքանչյուրով նախատեսված աշխատանքներն իրականացվում են նախանշված ուսումնական կիսամյակներում՝ ուսումնական և հետազոտական կառուցամասերի կրեդիտներով արտահայտված ծավալների հետևյալ համամասնությամբ:

Ծրագրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից

« Ընդհանուր գիտակրթական դասընթացներ», որը ծառայում է ծրագրում նպատակառուղղված է ուսանողների մոտ փոխանցելի գիտելիքների և կարողությունների, մասնավորապես, տեղեկատվական տեխնոլոգիական ունակությունների, գիտական օտար լեզվի և մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը ապահովելուն:

«Ընդհանուր մասնագիտական դասընթացներ (գիտատեսական և գիտա մեթոդական) » - ծրագրի պարտադիր դասընթացների կազմն է, որն ապահովում է տվյալ մասնա- գիտացմամբ մագիստրոսի կրթական մակարդակում պահանջվող գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը: Դրանք մշակվում են՝ հաշվի առնելով մասնագիտական աշխատաշուկայի արդի կարիքները և պահանջմունքները:

«Գիտահետազոտական աշխատանքի բովանդակությունը պայմանավորվում է ուսանողի մագիստրոսական ատենախոսության թեմայի խնդիրներով և կազմ- վում է գիտական ղեկավարի հետ համատեղ: Այն կազմակերպվում է ուսումնա- ռության 2-րդ, 3-րդ և 4 կիսամյակներում՝ ընդհանուր 18 կրեդիտ աշխատածա- վալով:

«Գիտահետազոտական պրակտիկա»ն կազմակերպվում է գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Կարող է իրականացվել ամբիոնի կամ լաբորատորիայի գիտական թեմաների շրջանակներում: «Գիտամանկավարժական պրակտիկա»ն կազմակերպվում է գիտական ղեկավարի համաձայնությամբ կազմված և հաստատված ծրագրով: Նախատեսում է բակալավրիատում սեմինարների և գործնական պարապմունքների անցկացում, կուրսային աշխատանքների գրախոսում:

Մագիստրոսական ատենախոսության/ ավարտական որակավորման աշխատանքի կատարումը և նրա պաշտպանությունը մագիստրոսի կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որն իրականացվում է 4-րդ կիսամյակում:

Ցուրաքանչյուր կրթաբլոկի աշխատատարությունը և կրեդիտները ըստ կրթաբլոկների հաստատվում է ելնելով մասնագիտական ծրագրի առանձնահատկություններից:

4. Ուսումնական պլանի մշակման կարգը

4.1. Մասնագիտության կամ մասնագիտացման ուսումնական պլանը մշակվում է համաձայն համապատասխան Մասնագիտական կրթական մասնագրի, ՀՀ որակավորումների ազգային շրջանակի մակարդակներով սահմանված ուսանողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների նկատմամբ ներկայացվող պահանջների:

4.2. Ուսումնական պլաններում ընդգրկվող դասընթացների բովանդակությունը, ծավալը, հաջորդականությունը և ուսումնառության ձևերը պետք է ապահովեն.

ա) մասնագետների հիմնարար պատրաստման գործընթացի շարունակականությունը,

բ) ընդհանուր գիտական և մասնագիտական առարկաների միասնականացումը՝ կրթության հարակից ուղղությունների համար,

գ) ուսումնական և մանկավարժական պրակտիկաների անցկացման ընթացքում գիտելիքների, կարողությունների և հմտությունների խարացումը և ամրագրումը:

4.3.Բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններում բազային ուսումնական պլանների նախագծերի մշակման համար ստեղծվում են հանձնախմբեր, որոնք կազմում են ՄԿԾ-ի ելքային կրթական արդյունքներին համապատասխան կրթաբլոկները, դրանց հատկացվող կրեդիտների համամասությունները և այդ կրթաբլոկների պարտադիր և կամընտրական առարկաներն ու ուսումնառության հաջորդականությունը:

4.4. Բազային ուսումնական պլանի նախագծի մշակմանը հանձնախմբի աշխատանքներին մասնակցում են ֆակուլտետներում ստեղծված աշխատանքային խմբերը, դեկանները, շահագրգիռ ամբիոնների ներկայացուցիչների մասնակցությամբ:

4.5. Բազային ուսումնական պլանների նախագծերը մշակվում են մասնագիտական կրթական ծրագրի մշակման ընթացքում, ֆակուլտետներում և ամբիոններում ՄԿԾ-ների նպատակ-խնդրի,ելքային կրթական արդյունքների,առարկայացանկի դրանց համապատասխանելիության հատակեցումից հետո և վերանայվում մեկ շրջափուլի ինքնագնահատումից /ինքնավերլուծությունից/ հետո:

4.6. Բազային ուսումնական պլանի նախագիծը մշակելիս որպես հիմք ընդունվում է սույն կարգում շարադրված ուսումնական պլանների կառուցվածքը, ճշտվում է դասընթացների

ցանկը և դրանց դասավանդման հաջորդականությունը, հաշվի են առնվում դասընթացների վերջնարդյունքները ՄԿԾ-ում, յուրաքանչյուր առարկայի դասավանդման մեթոդաբանությունը (դասախոսություններ,գործնական պարապմունքներ, սեմինարներ, լաբորատոր աշխատանքներ),ուսումնառության մեթոդները և գիտելիքների գնահատման մեթոդները և ձևերը, կուրսային աշխատանքներ նախատեսող առարկաները, պրակտիկաների տեսակները՝ անցկացման կիսամյակներով և տևողությամբ, վերջնական ատեստավորման ձևերը (որակավորման քննություններ, մագիստրոսական ատենախոսություն) և այլն:

4.7. Ուսումնական պլանի յուրաքանչյուր բաղադրիչի աշխատատարությունը արտահայտվում է ECTS կրեդիտային միավորներով:

4.8. Ուսումնական պլանի բնօրինակը պահվում է ՀՊՄՀ ուսումնական վարչությունում, պատճենները՝ համապատասխան դեկանատում և ամբիոններում: